

Աշխարհագրություն առարկայի 2017 թ. դպրոցական օլիմպիադայի  
մարզային (քաղաքային) փուլի  
(տևողությունը՝ 150 րոպե)  
10 – րդ դասարան

1. Ինչ ի է հավասար Արեգակի ճառագայթների անկման անկյունը Երևանում, կեսօրին, դեկտեմբերի 22 -ին և հունիսի 22 – ին.....2 միավոր
2. Բացատրել հիմնական և անցումային կլիմայական գոտիների տարբերությունը /բերել 2 հիմնական և 2 անցումային գոտիների տարբերության օրինակներ/.....2 միավոր
3. Տրվածներից առանձնացնել ամենաաղքատ երկրների եռյակը.....1 միավոր
  1. Ալբանիա, Էրիթրեյա, Թուրքմենիա
  2. Բրունեյ, Պերու, Մոզամբիկ
  3. Մալայզիա, Չադ, Անգոլա
  4. Եթովպիա, Աֆղանստան, Հայիթի
4. Կազմել «մշակաբույս – մշակության մասնագիտացված երկիր» համապատասխան գույգերը.....2 միավոր  
ցորեն, բրինձ, եգիպտացորեն, վուշ, շաքարի ճակնդեղ, համեմունք, թեյ, սուրճ  
Ֆրանսիա, Վիետնամ, Սյանմա, Ուկրաինա, Ռուսաստան, ԱՄՆ, Ինդոնեզիա, Ճապոնիա
5. Աշխարհագրական մտածողության հիմնական հատկանիշներից չէ.....1 միավոր
  1. տարածականությունը
  2. օրիզոնտալությունը
  3. համալիրությունը
  4. կոնկրետությունը
6. Նստվածքային ծագման ապար է.....1 միավոր
  1. կերակրի աղը
  2. օբսիդիանը
  3. մարմարը
  4. գրանիտը
7. «Հող – բնական զոնա» գույգերից ընտրել ճիշտը.....1 միավոր
  1. սևահող – անտառատափաստան,
  2. անտառային գորշ – խառն անտառ
  3. ճմապողգոլային – փշատերև անտառ
  4. կարմրագորշ – սավանա
8. Երկրի տրանսպորտային ուղիների երկարությունը 60 000 կմ է, իսկ տարածքը՝ 15 000 կմ<sup>2</sup>: Որոշել տրանսպորտային ցանցի խտությունը.....1 միավոր
9. Ո՞ր դարաշրջանի ժամանակաշրջան է տրիասը.....1 միավոր
  1. արխեյան
  2. պալեոգոյան
  3. կայնոգոյան
  4. մեզոգոյան

10. Որքան նավթ /ջերմային գործակիցը՝ 1.5/ պետք է այրել 6 տոննա քարածխին համարժեք էներգիա ստանալու համար.....1 միավոր
11. ՀՀ բնակչության վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.....1.5 միավոր
1. Եզդիների մեծ մասը բնակվում է Արագածոտնի և Արմավիրի մարզերի գյուղերում:
  2. Մինչև 1000 մ բարձրությունները ՀՀ ամենանոսրաբնակ գոտին է:
  3. 1988 – 1990 թթ. ավելի քան 180 հազ. աղբբեջանցիներ ՀՀ – ից հեռացան, իսկ ազատված բնակավայրերում հաստատվեց Աղբբեջանից արտաքսված հայությունը:
  4. ՀՀ բնակչության կեսից ավելին բնակվում է 1500 – 2500 մ բարձրության գոտում:
  5. Բնակչության թվով երրորդ քաղաքը Վաղարշապատն է:
  6. ՀՀ – ն իր հարևան երկրների համեմատ բնակչության մեծ խտություն ունեցող երկիր է:
12. Հայկական լեռնաշխարհի գետերի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որոնք՝ սխալ.....1.5 միավոր
1. Ունեն հիմնականում ձնաանձրևային և մասամբ՝ ստորերկյա սնում:
  2. Հորդանում են հիմնականում ամռանը:
  3. Արևմտյան Եփրատը սկիզբ է առնում Ծաղկանց լեռներից, իսկ Արևելյան Եփրատը՝ Ծաղկավետ զանգվածից:
  4. Արևմտյան Տիգրիս և Արևելյան Տիգրիս գետերի միախառնումից առաջանում է Շատ – Էլ-Արաբ գետը:
  5. Սկիզբ են առնում Առաջավոր Ասիայի խոշոր գետերը:
  6. Եփրատը լեռնաշխարհի ամենաերկար գետն է, Տիգրիսը՝ ամենաջրառատը:
13. Դուրս գրել այն բուսատեսակները, որոնք տարածված են հիմնականում Աֆրիկայում...1 միավոր
- |               |                     |
|---------------|---------------------|
| 1. սեբվոյա    | 5. բաոբաբ           |
| 2. կազուարի   | 6. միմոզա           |
| 3. վելվիչի    | 7. հովհարաձև ակացիա |
| 4. արաուկարիա | 8. կեչի             |
14. Օրգանական նյութեր սինթեզող կենդանի օրգանիզմները կոչվում են.....1 միավոր
- |                 |                  |                  |                |
|-----------------|------------------|------------------|----------------|
| 1. ռեդուցենտներ | 2. կոնսումենտներ | 3. պրոդուցենտներ | 4. պեստիցիդներ |
|-----------------|------------------|------------------|----------------|
15. Նշված գաճաճ պետություններից ո՞րը միապետություն չէ.....1 միավոր
- |            |           |                |               |
|------------|-----------|----------------|---------------|
| 1. Անդորրա | 2. Մոնակո | 3. Լիխտենշտեյն | 4. Սան Մարինո |
|------------|-----------|----------------|---------------|
16. Տրվածներից ո՞րն է ՄԱԿ – ի հատուկ մասնագիտացված բնապահպանական կազմակերպություն.....1 միավոր
- |             |             |           |              |
|-------------|-------------|-----------|--------------|
| 1. ՅՈՒՆԵՍԿՕ | 2. ՅՈՒՆԻՄԵՖ | 3. ՅՈՒՆԵՊ | 4. ՅՈՒՆԻԿՏԱԴ |
|-------------|-------------|-----------|--------------|